2-14 3R3.



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սեպտեմբերի քսանը ծննդյան օրն է հանգուցյալ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի, իսկ քսանմեկը՝ հոչակումը Հայաստանի Հանրապետության անկախության: Աստծու նախախնամությամբ իրար են հաջորդում Վեհափառ Հայրապետի ծննդյան և մեր հայրենիքի նորօրյա անկախությունը ավետող օրերը: Իրար են հյուսված այդ օրերը՝ կապված են դարերի հոլովույթում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերն ու կոչումը իրենց մեջ խտացնող ներքին մի խորհրդով:

Հայրապետական և ապա հանրապետական:

Երբ ընկել է հայոց պետականությունը, Հայոց Եկեղեցին ոչ միայն հովվել է Քրիստոսի բանավոր հոտը մեր հայրենիքում, այլև կրել մեր հայրենիքի պետականության պատասխանատվությունը, մեր հայրենիքը ներկայացրել օրվա տիրողների առջև՝ հայրապետական գավազանը դարձնելով նաև իշխանության մական:

Մեր դասական մատենագրությունում որևէ դեպք հիշելիս պատմիչները նախ գրել են «ի թագաւորութեանն եւ ի հայրապետութեանն»՝ նշելով գահակալող հայոց արքային և հայրապետին: Դեպքերի բերումով երկար ու ձիգ դարեր մեր պատմիչները բախտ չեն ունեցել գրելու «ի թագաւորութեանն» և մնացել է միայն «ի հայրապետութեանն» և Հայոց Հայրապետների իրարահաջորդ շարքով է կազմվել հայոց պատմության ժամանակագրությունը:

Այս համաբանությամբ էլ վերջին տասնամյակներին Վազգեն Առաջինը եղել է թե՛ հոգևոր հովիվ և թե՛ մեր ժողովրդի շահերն է ներկայացրել ազգային-քաղաքական մի շարք կարևոր մարզերում՝ աշխարհի մեծ տերությունների և նախկին Միության ղեկավարների հետ ունեցած իր հանդիպումներում:

Առաքել Դավրիժեցին ժամանակին ցավով և հեծեծանքով գրել է. «Իսկ եկեղեցիներն ու վանքերը՝ բոլորը անշուք ու անպատիվ, զարդերն ու սպասքները՝ բոլորովին կողոպտված, մինչև իսկ Սուրբ Սեղանը՝ ամենևին մերկ ու բաց: Երկար ժամանակ փակված դռներով խավար ու անլույս, պաշտամունքից ու պատարագից լուռ, շինվածքը ավերված ու խախտված, տանիքն ու պատերը իբրև անտեր ու այրի՝ զրկված փեսայից, օտարացած որդիներից, նստած թախծոտ ոգով ու անմխիթար լալիս էին մարդու երեսին»: ԺԷ դարի մատենագրի նկարագրած գրեթե նույն վիճակն էր տիրում հայոց վանքերում և այն օրերին, երբ հայրապետական գահ բարձրացավ Վազգեն Առաջինը և հմուտ ու խորագետ մի քաղաքականությամբ մեր Եկեղեցին բարձրացրեց նման անշքացյալ վիճակից: Վեհափառի ջանքերով Էջմիածի-

ՆԸ վերստին դարձավ հայ ժողովրդի ազգային-հոգևոր կենտրոնը, աշխարհասփյուռ հայորդիներին շարունակ հիշեցնելով իրենց պարտքը առաքելահիմն Աթոռի և մեր հայրենիքի հանդեպ:

Ժողովրդի համար թե՛ նվիրական պահերին և թե՛ ճակատագրական օրերին հնչեցրած խոսք-հորդորներով Վազգեն Առաջինը դարձավ կենդանի մարմնավորողը մեր երջանկահիշատակ հայրապետների փառքի, մի փառքի, որը գեղեցիկ արտափայլմամբ Մայր Աթոռից տարածվեց Սփյուռքի ամենահեռավոր գաղթօջախներն անգամ:

Վեհափառի այս անդուլ գործունեության շնորհիվ էր նաև, որ մարդկանց սրտերում վառ մնաց հոգևոր ինքնության կրակը, և մեր ժողովուրդը որպես մեկ մարին և մեկ հոգի, դիմագրավելով բոլոր զրկանքները, անվեհեր ընդառաջ գնաց վերածնվող անկախությանը:

1990 թ. նորընտիր խորհրդարանը իր գործունեությունը սկսեց Վազգեն Առաջինի օրհնանքով, իսկ մեկ տարի անց, 1991 թ. սեպտեմբերի տասնչորսին, անկախության հանրաքվեի նախօրեին, Վեհափառ Հայրապետը մեր ժողովրդին դիմեց հետևյալ խոսքերով. **«Ազատության ու անկախության կանչը մեր բազմադարյան պատմության հրամայականն է, մեր ազգի գիտակցության թելադրանքն է, մեր ապագա գոյատևման երաշխիքն է»:** Մի քանի օր անց, սեպտեմբերի քսաներեքին, երբ ժողովրդյան կամքի արտահայտմամբ հռչակվեց ծնունդը Հայաստանի անկախ Հանրապետության, խորհրդարանում մաղթանքի իր խոսքում շեշտելով, թե քաղաքական անկախությունը պիտի խարսխվի ժողովրդի բազմադարյան հոգևոր արժեքների վրա, Վեհափառն ասաց. **«Այսօր, երբ մեր պատմության նոր առավոտն ենք դիմավորում, հռչակումովը մեր նորածին Հանրապետության անկախության, հիշենք հայրենաստեղծ մեր Հայկ նահապետին և Սուրբն Գրիգոր Լուսավորչին, որ Քրիստոսի արարչագործ լույսով ոգեղինացրեց կյանքը հայոց, որով աշխարհի հորիզոնի վրա բարձրացավ ծիածանը «փառաց լույս» մեր աննման Ոսկեդարի: Նաև հետ այսու մեր ազգի տենչանքը պետք է լինի անկախության ճանապարհով հասնել ազատագրված հայ ոգեկանության նոր բարձունքների»:**

Լուսավորչի 130-րդ գահակալը եղավ խտացյալ իրականությունը այդ նույն երազած, սպասված անկախության, որպես Անկախության Նորօրյա Հայրապետ օրհնեց սրբալույս մյուռոնը և հռչակեց **Անկախության մյուռոն,** ապա նույն սրբալույս մյուռոնով օծեց Տիրամոր պատկերը Միածնաէջ Ս. Տաճարում և հռչակեց **Անկախության Տիրամայր:** Ապա երգակցելով երկնային զվարթուններին որպես մաղթանք Անկախ Հայաստանի օրհներգեց. «Տէր թագաւորեաց, վայելչութիւն զգեցաւ»-ը, և, որպես վայել է քահանայապետին, նույն մյուռոնաբույր իր Աջով, հայոց խորհրդարանի մեջ, ի տես համայն հայության և ողջ աշխարհի, օրհնեց Հանրապետության առաջին նախագահին: Տեսնելով հայրենի փառքը վայելչորեն հաստատուն և անվարան, Հայ Եկեղեցին առաջնորդում էր դեպի հայոց դարձի պետականության 1700-ամյակը, որպեսզի քաղաքամայր Երևանի կենտրոնում 2001 թվականին, որպես խորհրդանիշ Աստուծո փառատրության, օծվի Ս. Գրիգոր Լուսավորիչ կառուցվելիք Մայր տաճարը:

Հայ ժողովրդի սրբությունն ու միասնականությունը խորհրդանշող 86-ամյա Հայրապետը անեղծ ու անթառամ իր պատգամներով շարունակում է առաջնորդել Հայ Եկեղեցին:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի, եղիցի, եղիցի: Ամեն: